

ԴՈԿՏ. ՄՈՎՍԵՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ

Posted on April 7, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազրույցը վարեց՝ **Համօ Մոսկոֆեան**, Պեյրուֆ, Լիբանան, 5 Ապրիլ 2010

Արուեստաբան, Noah's Ark Ցուցասրահի Սեփականատեր ու Տնօրեն

“Մենք պետք է միջազգային առումով պատուենք եւ նշենք մեր արուեստի ու մշակույթի մեծութիւնները ինչպէս ուրիշ պետութիւններ ու ժողովուրդներ կ'ընեն:”

Հրց. Դոկտ. Հերկելեան, արդեն 15 տարի է, որպէս «Նոյեան Տապան» (Noah's Ark) ցուցասրահի սեփականատեր ու տնօրեն նաեւ հայ թէ օտար գեղարուեստի մասնագետ, ցուցահանդեսներու կազմակերպիչ ու պատկերագիրքերու հրատարակիչ Ձեր գործունեութիւնը կը ծաւալէք 3 ցամաքամասերու վրայ: Կարո՞ղ եք այս բոլորը հակիրճ ներկայացնել մեր ընթերցողներուն:

Պատ. Այս ցուցասրահը հիմնադրած ենք 1995 թ.-ին, հանգուցեալ նշանաւոր արուեստաբան Հենրիկ Իգիթեանին, Մոսկուաբնակ Միեր Սահակեանին եւ Ռուբեն Աւագեանին հետ: Ծրագրած էինք որ այն շղթայ մը ըլլայ, Մոսկուայի մէջ մեր գրասենեակով եւ համագործակցելով այնտեղ գտնուող «Մարս» ժամանակակից արուեստի թանգարանի հետ: Ուրեմն դէպքերու բերումով մեր ընկերներէն Միեր Սահակեան շատ շուտ մահացաւ եւ նաեւ Հենրիկ Իգիթեան:

Որոշ իրադարձութիւններէ ետք մեր գրասենեակը Մոսկուայի մէջ փակուեցաւ: Սակայն մեր կապը կը շարունակուի Մոսկուայի հետ, որուն իբր արդիւնք Մոսկուայի մէջ հրատարակուեցաւ գեղարուեստի ալպոմ մը որուն մէջ տեղ գրաւած է նաեւ գեղանկարիչ Վահրամս ու իր ստեղծագործութիւնները: Այս ցուցասրահը Պեյրուֆի մէջ մնաց ինծի: Համաձայն մեր ծրագրի այստեղէն կը վարենք ցուցահանդեսներու կազմակերպումը եւ համագործակցութիւնը Երեւանի, Մոսկուայի ու Պեյրուֆի միջեւ միջազգային ցուցահանդեսներու:

Այս ընթացքին մենք մասնակցեցանք 20-է աւելի միջազգային ցուցահանդեսներու: Աւելի այստեղէն է որ աշխատանքներն յառաջ կը տանինք գործակցելով Ծոցի երկիրներու հետ: Սակայն ինչպէս գիտենք 5 տարի առաջ Լիբանանի Վարչապետին ահաբեկումէն ետք գործերը բաւականին դանդաղեցան, տնտեսական բարդութիւններով: Սկսանք աշխատանքներ ծաւալել արտասահմանի մէջ որտեղ 2000 թ. էն ի վեր արդէն գործունեութիւն ունեինք:

Այդ թուականին հոս այցելած է ժնեւի «Արուեստի Տօնավաճառի» (Art Fair) տնօրէնը Փաթրիք Պարէր որ տեսնելով մեր հաւաքածոն եւ աշխատանքները որոշեց Noah's Ark-ը հրաւիրել ժնեւի ամենամեայ Pal Expo-ին: Հոն էր որ նիւթական եւ բարոյական գետնի վրայ բաւականին դիւրութիւններ ընծայուեցան մեզի, որովհետեւ մեր արուեստը եզակի էր ռուս արուեստագետներու ստեղծագործութիւններով՝ ինչպէս Խուդիակով, Անտրէ Թոսթին, Ցվետաեւ, Շեմիաքին: Այսպիսով այդ Յոբելեանական ցուցահանդեսին մեր մասնակցութեամբ մտանք աշխարհի 40 լաւագոյն ցուցասրահներու շարքին:

Այս առիթով Վահրամի մեկ ստեղծագործութիւնը՝ Midnight Game (Կէս գիշերային խաղ), Կրուերի «Ֆանթասթիք Արթս» թանգարանի կողմէ ընտրուեցաւ տարուան լաւագոյն ստեղծագործութիւնը ու կախուեցաւ իրենց թանգարանը: Այս պատճառ դարձաւ որ թէ Վահրամին եւ թէ մեր ցուցասրահին հանդէպ հետաքրքրութիւնը բազմապատկուի որովհետեւ այսպիսի ցուցահանդէսներու ընթացքին մեծ մասնագետներ (բազմաթիւ երկիրներէ) ներկայ կ'ըլլան... ու յանկարծ հրաւերներու տարափ մը եկաւ մեզի:

Սկսանք մեր նկարները ցուցադրել Պարսելոնայի, Վենետիկի, ապա անցանք Նիւ-Եորք, ինչպէս նաեւ Լաս Վելաս, Չիքագօ, Ֆիլատելֆիա: Այնտեղէն անցանք Քանատա՝ Մոնթրէալ: Նախանցեալ տարի հասանք մինչեւ Պուէնոս Այրէս ուր բացառիկ ընդունելութեան արժանացանք, որովհետեւ կը ներկայացնէինք Խորհրդային Միութեան 6 նախկին երկիրները՝ Հայաստան, Վրաստան, Բելառուս, Ռուսիա, Ուքրաինա եւ Ղազախստան: Նշուած երկիրներու դեսպանները ներկայ եղան, իրենց հետ բերելով նաեւ իրենց բարեկամ բոլոր երկիրներու դեսպանները ու այլ քաղաքական գործիչներ: Հայաստանի դեսպան Պրն. Կարմիշալեանի հրաւերով ներկայ էին նաեւ երկրի պաշտօնական անձինք ինչպէս՝ Արտաքին Գործոց Նախարարը, որ մեզի եւ Արժանթինեան արուեստագետներուն հրաւիրեց իր բնակարանը: Լիբանանի դեսպանը եւս իր հերթին հրաւեր մը ալ կազմակերպեց ի պատիւ մեզի եւ Հայաստանի դեսպանութեան:

Կ'ուզեմ նշել որ մեզի յատկացուած էր առանձին տաղաւար մը: Առաւել՝ պատկերագիրքին յառաջաբանը վստահուեցաւ ինձի, որն թարգմանուեցաւ եւ տպագրուեցաւ Սպաներէնով: Այս մէկը անելի մեծ հետաքրքրութիւն յառաջացուց մեր ցուցասրահին շուրջ:

Այնուհետեւ հրաւերներ ստացանք Ճապոնէն, Չինաստանէն, Փարիզէն: Անցեալ տարի մասնակցեցանք Պէյճիկի միջազգային ցուցահանդէսին, դարձեալ ստանալով գալ տարուան համար 2 հրաւեր եւս՝ մէկը Քուանգ ժուէն, միւսը Շանգհայէն : Հրաւերներ ունինք նաեւ Եւրոպայէն, մասնաւորապէս Ժնեւէն, ուր քանի մը անգամներ ցուցադրած ենք եւ մասնակցած ենք: Այս տարի նախընտրեցինք մասնակցիլ Մօնաքոյի միջազգային ցուցահանդէսին, իբրեւ նոր տեղ եւ իբրեւ նոր ասպարեզ Մայիսի սկիզբերուն: Եւ այսպէս մեր գործերու դաշտը կ'ընդլայնի:

Աւելցած է նաեւ մեր նկարիչներու ցանկը, ունինք 5 արուեստագետներ որոնք մնայուն կերպով կը համագործակցին Noah's Ark ցուցասրահին հետ, որոնցմէ 2-ը կ'ապրին Մոսկուայի եւ Հայաստանի միջեւ՝ Վահրամ Դաւթեան եւ Վահան Ռումելեան եւ միւս 3 կ'ապրին Երեւանի մէջ՝ Դաւիթ Դաւթեան, Սուրէն Ոսկանեան եւ Էտիկ Բերդեան: Այս արուեստագետները տարբեր ոճերու, տարբեր դպրոցներու ներկայացուցիչներ են: Մեր ցանկութիւնը՝ բաւարարել է տարբեր գեղարուեստական ճաշակի տեր մարդոց պահանջքները ու գեղագիտական ընկալումները :

Հրց. *Որպես արուեստաբան, արուեստի գիտակ եւ կազմակերպիչ ցուցահանդեսներու՝ ապրած եւ ուսանած եք նաեւ Խորհրդային Հայաստանի մէջ: Այսօր, Անկախութենէն ետք, նկատելի է որ հայկական կերպարուեստը արդէն տարբեր գիծերու վրայ է: Ի՞նչ է Ձեր կարծիքը ներկայիս փոփոխութիւններու մասին, իրենց դրական եւ բացասական կողմերով: Ինչպէ՞ս կը գնահատէք այս նոր իրավիճակը յատկապէս Անկախութենէն ետք:*

Պատ. Իրականութեան մէջ, Խորհրդային շրջանին, Հայ կերպարուեստը շատ չտուժեց համեմատած ուրիշ երկիրներու, որովհետեւ մենք ունեցանք զարթօնք Խորհրդային շրջանին: Հայրենի կերպարուեստագետներէն փաղանգ մը դուրս եկած էր Սովետական կամ «Սոցիալիստական ռեալիզմ» կոչուող հասկացողութիւնէն եւ կը ստեղծագործէր այնպէս ինչպէս ազատ պայմաններու տակ: Եւ այս եղաւ շնորհիւ 60-ական թուականներու խումբ մը երիտասարդ արուեստաբաններու եւ նկարիչներու որոնց մէջ էին Հենրիկ Իգիթեանը, Շահէն Խաչատրեանը, Մինաս Աւետիսեանը, Արթօ Չաքմաքչեանը, Արա Շիրազը, Խառազեանը, Էլիբեկեանը, Մազմանեանը եւ ուրիշներ:

Անոնք ըմբոստացան եւ գործնապէս որոշեցին իրենց գործերը այրել հրապարակին վրայ եթէ իրենց ազատութիւն չտրուի եւ իրենց արուեստին համապատասխան ժամանակակից արուեստի թանգարան չկառուցուի: Ճիշտ է, որ Խորհրդային Միութեան տրուած տեղը իտեալական չէր, բայց ի վերջոյ, նկարիչները որոնք ազատ կը մտածէին Խորհրդային պայմաններու տակ ինչ որ չափով կրցան ցուցադրել իրենց ստեղծագործութիւնները՝ թէեւ թեմայի առումով որոշ կաշկանդումներ գոյութիւն ունէին:

Իրենց յաջորդող սերունդը Կորպաչովեան շրջանին անելի բացուեցաւ աշխարհին եւ հոսք-արտահոսք տեղի ունեցաւ արտասահմանեան, արեւմտեան զարտուղի արուեստին որ այնքան ուղիղ չէր համեմատեր հայ արուեստի զարգացման հետ: Այս մէկը թերեւս անհրաժեշտութիւն էր բայց ըրին բոլոր տարօրինակութիւններ որոնք կը զարմացնէին բայց չէին հիացներ: Անոնք տեղի կ'ունենային Եւրոպայի եւ յատկապէս Ամերիկայի մէջ 40-ական թուականներուն եւ քիչ մըն ալ առաջ: Այդ բոլորը ըրին, բայց այդ բոլորին մէջէն (ինչպէս որ «Տատալիզմ»-էն ծնաւ «Սիւռեալիզմ»-ը) իբրեւ առողջ ուղղութիւն, «Սիւռեալիզմ»-ի մէջ շեշտուեցաւ ապսուրտը, անհեթեթութիւնը:

Այս անիշխանական թոհուբոհէն ետք Հայաստանի մէջ, (ինչպէս միւս Խորհրդային հանրապետութիւններուն), սկսան ձեւաւորուիլ նոր ուղղութիւններ: Օրինակի համար՝ Մոսկուայի մէջ ձեւաւորուեցաւ «Ապսուրտսիւռեալիզմ»-ը իբրեւ «Սուռեալիզմ»-ին մէկ տեսակը: Այսպիսով կրնանք ըսել որ Խորհրդային Միութեան նախկին երկիրներու մէջ «Սուռեալիզմ»-ը ծաղկեցաւ այնպէս ինչպէս Խորհրդային կարգերը կը թելադրէին: Անոր համար «Ապսուրտութիւն»-ը այսինքն անհեթեթութիւնը շատ անելի է քան դասական «Սիւռեալիզմ»-ի քով:

Սակայն հոս պետք է յստակացում մը ընենք՝ անոնք որոնք հետեւեցան նախկին

ուղղութիւններու յատկապէս՝ որոշ մեծ նկարիչներու՝ Մարթիտի եւ Մոսէլիանիի, Սալվատոր Տալիի կամ Փիքասսոյի նման, եւ մնացին այդ արուեստագետներու շուքին տակ, չգնահատուեցան միջազգային գետնի վրայ: Իսկ անոնք որոնք այդ մեծերուն արուեստը առին եւ անոր վրայ ինչ-որ բան ակելցուցին եւ դարձուցին իրենց սեփական արուեստը եւ ստեղծագործեցին համաձայն իրենց ներքին մղումներուն, թօթափելով ազդեցութիւնները, գնահատուեցան, ապագային եւս պիտի գնահատուին ու մտնեն միջազգային արուեստի պատմութեան մէջ:

Այս ըմբռնումով 20-էն ակելի գեղանկարիչներ կը գնահատուին այսօր միջազգային գետնի վրայ: Համեմատած մեր երկրին ու իր բնակչութեան թուաքանակին այդ թիւը քիչ է: Բայց համեմատած Հայաստանի մէջ ունեցած մեր արուեստագետներուն որոնք 2000 ակելի են՝ քիչ է: Եւ սա պետք է ընդունինք: Համեմայն դէպս այս մէկն ալ ուրախալի է մեզի համար որովհետեւ իրենք անձնական միջոցներով է որ կը մասնակցին միջազգային ցուցահանդեսներուն: Դժբախտաբար ոմանք կը կարծեն թէ իրենց հայկական անունը ջնջեն՝ ակելի ժողովրդականութիւն կը գտնեն: Բայց մեր փորձը ցոյց կուտայ թէ այսպէս չէ: Բոլոր միջազգային ցուցահանդեսներուն կը գրեն Noah's Ark gallery - Armenia:

Հրց. *Մի քանի օր առաջ կազմակերպեցիք Հայրենի գեղանկարիչ Սուրէն Ոսկանեանի ցուցահանդեսը: Եւ որպէս սփիւռքահայ արուեստաբան եւ Noah's Ark gallery-ի տնօրէն եւ սեփականատեր, ինչպէ՞ս կը տեսնէք Սփիւռքի գեղանկարիչներու եւ արուեստի շրջանակներու համագործակցութիւնը Հայրենի գեղանկարչութեան հետ այս դժուարին ժամանակներուն:*

Պատ. Սփիւռքահայ եւ Հայրենի գեղանկարիչներու մէջ տարբերութիւններ կան թէ մտածելակերպի, թէ չափանիշներու, եւ թէ ստեղծագործական հնարաւորութիւններու մէջ: Նախ պայքար կայ. այն սփիւռքահայ արուեստագետները, որոնք բացուած են աշխարհին, ինչպէս օրինակ Եւրօզը՝ հարց չունի: Բայց այն արուեստագետները որոնք եկած են Լիբանան կամ գացած են Ֆրանսա կամ Եմիրութիւններ, Լոս Անճելըս կամ Մոնթրէալ՝ ստեղծած են իրենց շուք որոշ համակրանք ու շուկայ, կը դժգոհին եթէ Հայրենիքէն նոր արուեստագետներ եկան իրենց բնական երկիրները:

Հայրենիքէն եկած նկարչութիւնն ալ յաճախ կը տարբերուի իր բնոյթով: Ես կը կարծեմ որ մեկը միւսին չի խանգարէր: Համագործակցութիւնը լաւագոյն միջոցն է այս հարցերը վերացնելու: Խնդիրն այն է որ մեր պետութիւնը նաեւ սփիւռքահայ կառոյցները, մշակոյթային քաղաքականութիւն չունին: Մենք պետք է միջազգային առումով պատուենք եւ նշենք մեր արուեստի ու մշակոյթի մեծութիւնները ինչպէս ուրիշ պետութիւններ ու ժողովուրդներ կ'ընեն: Ինչը որ մենք չ'ըրինք օրինակ Արամ Խաչատուրեանի նման տիտանի մը պարագային: Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնը հակառակ որ բազմաթիւ դրական գործերուն քայլեր իրագործեց դեռեւս ծրագրուած մշակոյթային քաղաքականութիւն չունի: Խմբուելով Սփիւռքի

Նախարարութեան շուրջ կարելի է բազմաթիւ արգելքներ վերացնել մեր արուեստագետներու եւ գեղանկարիչներու աշխատանքներուն գործընթացին մէջ: Ձեռք բերուած յաջողութիւնները օգտագործել նաեւ Ազգային քաղաքականութեան ծիրէն ներս: Ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գծով:

Հրց. *Արդէն թեւակոխած ենք 21-րդ դարու երկրորդ տասնամեակը: Այդ առիթով ի՞նչ է Ձեր պատգամը արուեստասէր շրջանակներուն եւ ընթերցողներուն:*

Պատ. Ինչպէս որ ըսինք արդէն պէտք է համախմբուինք Սփիւռքի Նախարարութեան միջոցով միացեալ մշակոյթային, Ազգային քաղաքականութեան մը շուրջ մեր ազգային նպատակներու իրագործման համար: Այո, կան անհատներ որոնք մեծ աշխատանք կը տանին, սակայն պէտք է որ մեր բոլոր կարողութիւնները միացնենք յանուն մեր ժողովուրդին, Հայրենիքի եւ Սփիւռքի ծառայութեան համար:

Շնորհակալութիւն քեզի նաեւ Համօ, որ դուն մեր գեղարուեստի, մշակոյթի ու քաղաքականութեան բնագաւառներու ճանաչման գործընթացին մէջ առանձինդ միութեան մը չափ դեր կը կատարես:

